

DOI: <https://doi.org/10.46991/FLHE.2024.28.2.097>

Նելլի Սարգսյան*

<https://orcid.org/0009-0005-7381-8369>

Երևանի պետական համալսարան

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Փոխաբերություններն իրենց բարդ իմաստային կառուցվածքով գրավել են լեզվաբանների, բանասերների և գրականագետների հետաքրքրությունը և հաճախ հանդես եկել որպես հետազոտության կենտրոնական խնդիր: Գիտության զարգացման հետ համընթաց փոխաբերությունները՝ ոչ միայն որպես լեզվաբանական, այլև մտածողության առանձնահատկություններն արտացոլող երևույթ, ուսումնասիրվել են նաև հոգեբանության, կոգնիտիվ գիտության, ճանաչողական լեզվաբանության բնագավառներում: Որպես առօրյա իրականության մեջ լայն գործածություն ունեցող լեզվական փաստ՝ փոխաբերությունն ուսումնասիրվել է ինչպես գրական գեղարվեստական ստեղծագործություններին բնորոշ պատկերավոր խոսքի և լեզվի միավորների վերլուծման ու հասկացման նպատակով, այնպես էլ մարդու հոգեկան կերտվածքի և հասկացողության բացահայտման և բնութագրման միտումով: Սույն հոդվածում փորձ է արվում քննության առնելու փոխաբերությունների էության հիմնահարցը և դրանց ստեղծման հոգեբանական և ճանաչողական գործոնները: Հոգեբանության դիտանկյունից քննության խնդիրն է պարզաբանել փոխաբերությունների առաջացման և ընկալման բնույթը: Հոդվածում ներկայացվում են փոխաբերությունների կիրառման մեխանիզմների ճանաչողական առանձնահատկությունները: Փոխաբերությունների համակողմանի ուսումնասիրության համար էապես կարևոր է հաշվի առնել հոգեբանական և ճանաչողական բնագավառների ձեռքբերումները, կամ, այլ կերպ՝ միջգիտակարգային մոտեցմամբ առաջնորդվելը, որը ենթադրում է ինչպես լեզվաբանության, այնպես էլ գիտության այլ բնագավառներում արդեն իսկ մշակված սկզբունքների կիրառություն:

Բանալի բառեր. փոխաբերություն, ճանաչողաբանություն, հոգեբանություն, ճանաչողական մոդել, մոդելավորում, դասակարգում, հասկացողություն, հասկացույթ

* nelly.sargsyan@ysu.am



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 11/07/2024

Revised: 26/11/2024

Accepted: 16/12/2024

© The Author(s) 2024

Ներածություն

Փոխաբերությունը գրավոր թե՛ բանավոր խոսքում մարդու մտածողության և երևակայական ներաշխարհին արտահայտելուն ուղղված միջոց է, որն ըստ ավանդական մոտեցման՝ բնորոշվում է որպես խոսքային արտահաստիակային միջոց: Դրա շնորհիվ է, որ հնարավորություն է ստեղծվում օբյեկտիվ իրականության ցանկացած երևույթ ընկալելու, հասկանալու և ներկայացնելու՝ ելնելով հարանմանության սկզբունքից: Փոխաբերության վերաբերյալ իրականացվել են բազմաթիվ ու բազմաբնույթ ուսումնասիրություններ՝ բնութագրելով այն ինչպես լեզվաբանության, այնպես էլ գիտության այլ տիրույթներում: Որպես մարդու պատկերավոր մտածողության արտացոլման միջոց փոխաբերությունները դիտարկվել են նաև հոգեբանության և ճանաչողաբանության լույսի ներքո: Այս աշխատանքում նպատակ ունենք վեր հանելու և պարզաբանելու փոխաբերությանն առնչվող հետևյալ խնդիրները՝

- Որո՞նք են փոխաբերության ստեղծման հոգեբանական նախադրյալները:
- Ինչպե՞ս է դրսևորվում փոխաբերության կառուցվածքային-իմաստաբանական առանձնահատկությունների կապը մտածողության տարրերի հետ:
- Ինչպե՞ս է առաջանում փոխաբերությունը, և որո՞նք են դրա գործարկման մեխանիզմները:

Սույն աշխատանքում ուսումնասիրության համար հիմք են ծառայել հետևյալ հեղինակների աշխատությունները՝ Օ. Գոնչարով, Բ. Դանսիգեր, Ջ. Լակոֆ, Մ. Թըրնըր, Ժ. Ֆոկոնյե, Օ. Լագուտա և այլն: Հետազոտության համապարփակ իրականացման նպատակով գործադրվել է առաջ քաշված տեսությունների բնութագրման, համեմատական քննության ու վերլուծության մեթոդաբանությունը: Հողվածում հիմնական շեշտը դրվում է հոգեբանության և ճանաչողական լեզվաբանության մեթոդաբանական սկզբունքների վրա և փորձ է արվում պարզաբանել դրանց կարևորությունը փոխաբերության էությունը բացահայտելու և հասկանալու գործում:

Փոխաբերությունը՝ որպես հոգեբանական երևույթ

Փոխաբերության հոգեբանական քննությունը միտված է պարզելու դրա կիրառման ինչպես ուղեղային-նյարդաբանական պատճառաբանվածությունը, այնպես էլ հոգեվերլուծության մեջ դրա տեղն ու դերը:

Ուղեղի աջ կիսագնդի գործունեության արդյունքում իրականացվում է մարդու պատկերավոր և ստեղծարար մտածողության արտահայտումը (Брагина, Доброхотова, 1988), որը դրսևորվում է որպես օրինակ նախագագաման, ոչ խոսքային տեղեկության ընկալման, արվեստի բազում բնագավառների հետ կապված գործունեության միջոցով: Կարելի է ենթադրել, որ, լինելով մարդու ստեղծագործ մտածողության գործադրման արդյունք, փոխաբերության ստեղծումն ու ընկալումը սերտորեն կապված են աջ կիսագնդի գործունեության հետ: Այսուհանդերձ հարկ է նշել որ փոխաբերության առաջացումը և ընկալումը պայմանավորված են նաև մտավոր-վերլուծական մեխանիզմների գործադրմամբ: Այս առումով փոխաբերության որպես հասկացության, ստեղծումը հասկացության դասակարգման արդյունք է, իսկ ընկալումն իրականացվում է վերլուծական կարողությունների ակտիվացմամբ: Ըստ Օ. Լագուտայի՝ փոխաբերությունների առաջացումը և դրսևորումը մտավոր գործունեության մեջ, այլ կերպ ասած՝ փոխաբերականացումը, տրամաբանական դեդուկցիայի տարատեսակ է՝ տրամաբանական դասակարգման արտահայտություն (Ларыта, 2009): Նմանատիպ բարդ մտավոր գործընթացները զուգորդվում են ձախ կիսագնդի աշխատանքի հետ: Կարելի է հետևություն անել առ այն, որ փոխաբերությունը դրսևորվում է որպես ն՝ ստեղծագործական, ն՝ տրամաբանական-վերլուծական կարողությունների գործադրմամբ պայմանավորված լեզվի արտահայտչական միջոց:

Ըստ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի՝ փոխաբերություններն անխուսափելի են առօրյա իրականության մեջ, դրանք դրսևորվում են թե՛ լեզվում, և թե՛ մտածողության և գործողության մեջ, և մարդու հասկացության համակարգն իր էությանը փոխաբերական է (Lakoff and Johnson, 1980, էջ 195): Այս սկզբունքի վառ օրինակներն են հետևյալ գիտական եզրույթները՝ Կ. Յունգի մշակված «անիմուսի» և «անիմայի» փոխաբերությունները, Ռայխի՝ «օրգոն» եզրույթը, Բերնի «խաղեր» փոխաբերությունը և այլն (ըստ Լարыта, 2009):

Փոխաբերության կիրառման շնորհիվ հնարավոր է դառնում փոխաբինել երևույթների բարդ շարադրումը որոշակի մոդելներով, ինչն էլ նպաստում է տվյալ երևույթի և դրանում առկա խնդրի ըմբռնմանն ու լուծման հայտնաբերմանը:

Վերոշարադրյալի վառ օրինակ կարող է ծառայել փոխաբերության ուսումնասիրության հետ սերտ կապ ունեցող ճանաչողական մոդելավորման¹ սկզբունքը, որի հիմքում ընկած է «սև արկղ»²-ի փոխաբերությունը: Վերջինիս շնորհիվ հնարավոր է դառնում հասկանալ հոգեբանության ճյուղ համարվող բիհեյվիորիզմի³ «խթան – հոգեկան

գործընթացներ – հակազդում» փոխադարձաբար իրար հետ սերտորեն կապված գործունեության էությունը:

Հասկանչական է, որ փոխաբերությունը ևս ճանաչողական մոդելավորման դրսևորում է: Այս պնդումը հանգամանորեն քննարկվել է Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի «հասկացության հոգեբանության» (Lakoff, Johnson, 1980) և Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թրրնրրի «հասկացության խառնուրդ, կամ հասկացության ինտեգրացիա» տեսություններում (Fauconnier, Turner, 2002):

Փոխաբերությունը՝ որպես ճանաչողական երևույթ

Հասկացության փոխաբերության տեսությունը թույլ տվեց դիտարկել փոխաբերությունը ոչ միայն բառի կամ ասույթի տիրույթներում, այլև լեզվաբանության ոլորտից դուրս: Փոխաբերությունը, որպես որակ, առկա է մարդու գործունեության, նրա աշխարհընկալման մեջ (Lakoff & Johnson, 1980): Մարդկային հասկացական համակարգն իր էությամբ փոխաբերական է, հենվում է միայն լեզվաբանական տվյալների վրա, և միայն լեզվի շնորհիվ է մարդը ստեղծում փոխաբերություններ, որոնք էլ ձևավորում են նրա ընկալումը, մտածողությունը և գործունեությունը (Ларыта, 2009, էջ 15): Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ փոխաբերությունները մարդկային հասկացական համակարգի բաղադրիչներ են Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թրրնրրի զարգացնում են այն գաղափարը, ըստ որի իմաստի կառուցումը և ընկալումը ենթադրում են դինամիկ գործընթաց, որը ներառում է բազում իմաստային տիրույթների ցանցային տիպի շաղկապված փոխգործունեություն: Վերոնշյալ բացահայտումը սկիզբ դրեց Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թրրնրրի «հասկացության խառնուրդի կամ հասկացության ինտեգրացիայի» (blending) տեսությանը, որը մեծ տարածում է գտել ժամանակակից լեզվաբանության, լեզվաոճաբանության, գրաքննադատության, թարգմանաբանության բնագավառներում:

Հասկացության խառնուրդի տեսության ուսումնասիրության առարկան «մտածական տարածություն» հասկացությունն է, որը սահմանվում է որպես խոսելու և մտածելու գործընթացում կառուցվող փոքր հասկացական տիրույթ, որն էլ իր հերթին նպատակաուղղված է հասկացման ձևավորմանը և դրան համապատասխան գործողության կայացմանը: Մտածական տարածություն եզրույթն առավել պատկերավոր կերպով է մեկնվում Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թրրնրրի ներկայացրած «վանականի մասին հանելուկի»⁴ միջոցով:

Տվյալ հանելուկը լուծելու համար առաջարկվում է մտովի կազմել երկու պատկեր՝ մուտքային տվյալների տիրույթներ. առաջինը վանա-

կանի վեր ընթանալու պատկերն է, իսկ երկրորդը՝ վար ընթանալունը: Այս պատկերները (տիրույթները) մտածական տարածություններ են: Համադրելով այդ տիրույթները հնարավոր կլինի մտովի ստեղծել այնպիսի մի պատկեր/տիրույթ, որտեղ երկու վանականները (մեկը սարով բարձրանալիս, իսկ մյուսը՝ իջնելիս) սարի վրա կհանդիպեն իրար մի որոշակի կետում: Հասկացության խառնուրդը կամ ինտեգրացիան ենթադրում է մի քանի մտածական տարածությունների կառուցում և նրանց համակցում, որի արդյունքում ստեղծվում է մի նոր տիրույթ: Սա էլ իր հերթին թույլ է տալիս հանգելու փոխաբերական, նոր իմաստների կառուցմանը: Հասկացության ինտեգրացիայի գործարկման հիմնական բաղադրիչներն են.

- ընդհանրական տիրույթը, որը ներառում է տվյալ ինտեգրացիոն ցանցի մեջ ներգրավված բաղադրիչների ընդհանուր հատկանիշները, բնութագրերը,
- մուտքային տվյալների տիրույթները, որոնք առանձին (ենթադրելի) իրադրությունների համար առաջացած մտածական տարածություններ են,
- համակցված՝ վերջնական տիրույթը, որն առաջանում է մուտքային տվյալների տիրույթների փոխներթափանցման արդյունքում: (Fauconnier & Turner, 2002)

Հասկացության խառնուրդի տեսությունը բացատրում է մտածական տարածությունների համակցման գործընթացը և վերջինիս հետ զուգորդվող ինտեգրացված ցանցի կառուցումը: Հասկացության ինտեգրացիան ենթադրում է հետևյալ գործողությունների համադրումը՝

1. մտածական տարածությունների սահմանազատում,
2. տիրույթների կապակցում,
3. համակցված տիրույթում տարրերի ընտրություն և ներառում,
4. ստացված կառույցների ճշգրիտ տեղակայում,
5. հետադարձ պրոյեկցիա դեպի մուտքային տվյալների տիրույթներ,
6. համակցված տիրույթում նոր կառույցների ներգրավում,
7. համակցված տիրույթում բազում գործողությունների համադրում: (Fauconnier & Turner, 2002, էջ 40-48)

Համակցված տիրույթում իրականացվող գործողությունների մեջ են մտնում կապակցումը (composition), լրացումը (completion), գործադրումը (elaboration), խտացումը (compression), ապախտացումը (decompression): Տվյալ գործողությունների միջոցով հնարավոր է դառնում իրականացնել համակցված տիրույթում ներգրավված տարրերի բնականոն հարաբե-

րակցությունը և փոխազդեցությունը, որոնք հանգեցնում են նոր իմաստի կառուցմանը (Fauconnier & Turner, 2002, էջ. 40-48):

Հասկացութային խառնուրդի տեսությունը փոխաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողներին հնարավորություն է ընձեռում հասկանալու փոխաբերության ճանաչողական ոլորտը:

Հասկացութային փոխաբերությունների կառուցվածքային հիմքում ընկած է երկաստիճան հարաբերություն, այն է՝ փոխաբերության սկզբնաղբյուրային և վերջնական թիրախային տիրույթների միջև ընթացող փոխազդեցությունը (Dancygier, 2014, էջ 297-310): Հասկացութային ինտեգրացիայի տեսությունը, համալրվելով հասկացութային փոխաբերության մոտեցմամբ, առավել համապարփակ կերպով է ներկայացնում փոխաբերական արտահայտությունների իմաստային և կառուցվածքային հարաբերակցությունը՝ ներկայացնելով այն որպես մի քանի աստիճան պարունակող բարդ համակարգ:

Հասկացութային ինտեգրացիան ընդհանուր մտածական գործընթաց է, և դրա գործադրման պարզաբանումը ծառայում է նոր ստեղծված իմաստների ճշգրիտ բնութագրմանը: Այս ամենի շնորհիվ՝ տվյալ տեսությունը ներկայումս կիրառվում է բազմաթիվ ստեղծագործական ժանրերի, ինչպես օրինակ՝ վիզուալ, տեքստային, կինոնկարային կամ թատերական, վերլուծության գործընթացում (Dancygier, 2014, էջ 297-310):

Հասկացութային ինտեգրացիայի երևույթը միանգամայն կիրառելի է փոխաբերության ուսումնասիրության դաշտում հատկապես այն պատճառով, որ այն հնարավորություն է տալիս հանգամանորեն քննել փոխաբերության աղբյուր- և թիրախ-հասկացությունների միջև առկա բոլոր հասկացութային կապերը: Այս առումով՝ փոխաբերության հասկացութային ինտեգրացիայի միջոցով վերլուծման եղանակը հատկապես նպատակահարմար է դիպվածային փոխաբերությունների հասկացման հասնելու համար: Տվյալ մեթոդը թույլ է տալիս հիմնովին վերլուծել հեղինակային ոճով և մտածողությամբ պայմանավորված դիպվածային փոխաբերությունների աղբյուր- և թիրախ-հասկացությունների բոլոր հասկացութային գույքորդումները:

Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թըրներրի մշակած հասկացութային խառնուրդի տեսությունը հուսալի է և հատկապես կիրառելի փոխաբերության՝ որպես բարդ հասկացութային համակարգ ունեցող լեզվական-արտահայտչական միջոցի, կիրառումը բնութագրելու համար: Հարկ է նշել, որ եթե դասական մոտեցման համաձայն՝ փոխաբերությունները դիտվում են իբրև բազմաշերտ նշանակություններ ունեցող լեզվական միավորներ, որոնք ի հայտ են գալիս համապատասխան համատեքստում, ապա փոխաբերության բուն գործարկումը կախված է անալոգիկ, ասոցիատիվ

ռեֆերենտների առկայությունից: Ժ. Ֆոկոնյեի և Մ. Թըրնըրի հասկացության խառնուրդի տեսությունը բնութագրում է հասկացության կառուցման եղանակն ըստ տիրույթների, որոնց փոխադարձ գործունեության հետևանքով առաջանում են նոր, ընդ որում՝ նաև փոխաբերական իմաստներ:

Փոխաբերության ճանաչողական բաղադրիչի նշանակությունը գրական երկերի թարգմանության գործընթացում

Համաձայն Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի՝ հասկացույթները, որոնք մտածողության բաղկացուցիչ մասն են, պարզապես բանականության առարկաներ չեն: Դրանք կառուցում են այն ամենն, ինչն ընկալում է մարդը՝ ըստ իր՝ աշխարհի և այլ մարդկանց հետ հարաբերվելու յուրահատկության: Ընդ որում՝ մարդու հասկացության խառնուրդը էական դեր է կատարում առօրյա իրողությունների սահմանման մեջ: Հետևաբար, պատահական չէ Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի այն պնդումը, թե մարդու հասկացության խառնուրդն իր բնույթով փոխաբերական է (Lakoff & Johnson, 1980): Եվ այսպես՝ հասկանալի է, որ ճանաչողական լեզվաբանության մեջ առանցքային է առօրյա խոսքի, ինչպես նաև մտածողության և գործողության կայացման միջոցների հիմքում ընկած փոխաբերության տարատեսակ դրսևորումների գաղափարը:

Ի սկզբանե, փոխաբերության ուսումնասիրությունները կատարվել են բացառապես լեզվի տիրույթում՝ բառիմաստի և գրավոր ու բանավոր խոսքի ոճական արտահայտման առանձնահատկությունների դիտարկումների և հետազոտությունների դաշտում: Ջարգացման հաջորդ փուլերում փոխաբերությունը հետաքրքրության և հատուկ ուսումնասիրության առարկա է դառնում տեքստի մեկնաբանության, այլ կերպ ասած՝ հերմենևտիկայի ոլորտում (Գասպարյան, Մաթևոսյան, 2018, էջ 24-55): Մակայն, այս բնագավառի հետազոտական սահմանների ընդլայնման հետևանքով փոխաբերությունն աստիճանաբար ուշադրության է արժանանում նաև փիլիսոփայության և այլ գիտությունների դիսկուրսում: Լեզվաբանության զարգացման ներկա փուլում փոխաբերությունը չի կորցնում իր էության և արտահայտման հետ կապված խնդիրների արդիականությունը և ուսումնասիրվում է նաև ճանաչողական լեզվաբանության ոլորտում: Փոխաբերության՝ որպես պատկերավոր մտածողության արտացոլման միջոցի, քննությունը հաճախ իրականացվում է գեղարվեստական ստեղծագործության ոչ միայն հերմենևտիկ-քննադատական վերլուծության ճանապարհով, այլև գրական երկերի տարալեզու թարգմանությունների հետազոտման միջոցով:

Մի շարք լեզվաբաններ, ինչպես օրինակ՝ Ս. Հերմանսը և Ռ. Գալդինը հետաքրքրության արժանի դիտարկումներ են արել փոխաբերության և թարգմանության ընդհանրությունների ուսումնասիրության արդյունքում: Վերոնշյալ լեզվաբանները՝ երկուսն էլ մատնանշում են իմաստի «փոխադրում, փոխանցում» (Hermans, 2007, էջ 35-80; Guldin, 2016, էջ 9-29):

Փոխաբերության տեսության զարգացման ընթացքում ակնհայտորեն դրանց սահմանման մեջ գերիշխող է եղել իմաստի փոխանցման գաղափարը, որով, ըստ էության, սահմանվում էր փոխաբերության էությունը, սակայն հետագայում, փոխազդեցական տեսության առաջաջան շնորհիվ՝ փոխաբերությունն աստիճանաբար վերաիմաստավորվեց ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից: Նմանատիպ զարգացմամբ է բնութագրվում նաև թարգմանության տեսությունը, որը հիմնականում շեշտադրում է թարգմանական տեքստի՝ բնագրից կախված լինելու կարգավիճակի և հասկացությունների համարժեքության խնդիրները: Սակայն այս գաղափարները վերանայվեցին փոխակերպական լեզվաբանության տեսանկյունից, որն իր հերթին կարևորում է թարգմանական տեքստի համեմատաբար առավել ինքնավար բնույթը, ինչպես նաև թարգմանության գործընթացում իրականացվող նոր փոփոխությունների անհրաժեշտությունը: Ինչպես թարգմանված փոխաբերությունները, որոնք միտված են ոչ թե զուտ բնօրինակին արձագանքելու, այլ վերարտադրելու այն (Guldin, 2016), թարգմանությունն իր ամբողջությամբ նույնկերպ կոչված է վերստեղծելու բնագիր տեքստն այնպես, որ ընթերցողին կարողանա փոխանցել դրա գեղագիտական ազդեցությունը:

Փոխաբերության և թարգմանության միջև ընդհանրությունները հստակորեն ներկայացրել է Ռ. Գալդինը. և՛ փոխաբերությունը, և՛ թարգմանությունը երկակի հասկացություններ են (ունեն երկակի կառուցվածք): Փոխաբերականացմամբ ստեղծված իմաստը ստորադասվում է ուղիղ, առաջնային իմաստին, որն այն ձգտում է մեկնել: Թարգմանությունը ածանցյալ է բնագրի ստեղծագործությանը և իր իմաստով կախված է բնագրից: Փոխաբերությունն անորոշություն է ներմուծում նշանակյալի և նշանակչի միջև: Ե՛վ փոխաբերությունը, և՛ թարգմանությունը կարող են որոշակի բացասական ազդեցություն ունենալ ընթերցողի վրա, քանի որ իմաստի երանգի հստակեցման և մեկնաբանման գործառույթի հետ մեկտեղ, դրանք ենթադրում են նաև իմաստի աղճատում և մթագնում (Guldin, 2019):

Փոխաբերության վերաբերյալ ավանդական մոտեցումը մատնանշում է բառացի իմաստի փոխարինումը մեկ այլ իմաստով, որն էլ առանձնանում է՝ որպես բառի փոխաբերական իմաստ: Այս առումով առաջադրվում է նաև փոխաբերական իմաստի՝ ընթերցողի կողմից ընկալման

խնդիրը: Ինչպես նշում է Մ. Բլեքը, փոխաբերությունն ընկալելու համար ընթերցողը պետք է անցնի հեղինակի՝ փոխաբերության վերհանման ուղին հետադարձ ընթացքով և հասնի հաղորդվող իմաստին (Black, 1954, էջ 275-280): Փոխաբերության ընկալման խնդիրը կարևորվում է նաև գրական երկերում՝ դրանց թարգմանության տեսանկյունից, նախ և առաջ այն պատճառով, որ թարգմանչի աշխատանքը պահանջում է բնագիր տեքստի իմաստի և հեղինակի պատկերավոր լեզվի հստակ հասկացում:

Փոխաբերության ընկալման և թարգմանության հարցադրումները հատուկ տեղ են զբաղեցնում թե՛ գրական տեքստերի թարգմանության, թե՛ գրականագիտության և թե՛ բառիմաստների միջլեզվական համեմատական ուսումնասիրություններում: Փոխաբերության թարգմանության վերաբերյալ առկա են բազում մոտեցումներ, որոնցից առանձնանում են Պ. Ռիկյորի «փոխարինման» (Ricoeur, 2003, էջ 150-180) և Մ. Բլեքի փոխադրեցական տեսությունները (Black, 2004): Համաձայն առաջինի՝ փոխաբերություններն անթարգմանելի են, և դրանց թարգմանությունն իրականացվում է բառացի համարժեքների միջոցով, մինչդեռ ըստ փոխադրեցական տեսության՝ փոխաբերությունների թարգմանության հիմնասյունն է համարվում արտահայտված պատկերավոր իմաստի հաղորդումը թիրախ լեզվում առկա բազում խոսքային և լեզվական տարրերի միջոցով: Այս մոտեցումների շնորհիվ հնարավոր է դառնում ընդհանուր պատկերացում կազմել փոխաբերության թարգմանության մեխանիզմի մասին: Այնուամենայնիվ, նշված մոտեցումները չեն բնութագրում այդ գործընթացի կայացման մեջ թարգմանչի գործադրած մտածական, արտահայտչական կարողություններն ու հնարանքները, որոնք անխուսափելիորեն ներդրվում են թարգմանության մեջ: Վերջիններիս կարևորությունը չի կարող աննկատ մնալ, քանի որ հենց անհատի մտածական, լեզվաարտահայտչական կարողությունների միջոցով է ձևավորվում հասկացության փոխաբերական ուրվագծումը հասկացութային համակարգում:

Փոխաբերությունների թարգմանության վերաբերյալ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ն. Մանդելբլիտի ուսումնասիրությունը, որի համաձայն՝ բնագիր լեզվից թիրախ լեզու փոխաբերություններ թարգմանելիս կարևորվում է վերջիններիս հասկացութային էությունը, և առաջնություն է տրվում Ջ. Լակոֆի և Մ. Ջոնսոնի մշակած հասկացութային փոխաբերության տեսությանը: Ըստ Ն. Մանդելբլիտի մոտեցման՝ փոխաբերության վերաբերյալ ավանդական մոտեցումները, որոնք հստակ առանձնացնում են միայն նոր և «մեռած» տեսակի փոխաբերություններ, սահմանափակ պատկերացում են տալիս վերջիններիս բարդ և բազմաշերտ կառուցվածքի մասին (Mandelblit, 1995, էջ 217-250):

Այսպիսով՝ ավանդական մոտեցումները մակերեսորեն են ներկայացնում ոչ միայն փոխաբերության էության և կառուցվածքի ընդհանուր բնութագիրը, այլև դրա «թարգմանելիության» հնարավորությունը: Համաձայն Ն. Մանդելբլիտի՝ փոխաբերության հասկացությանը տեսությունը չի առաջարկում նոր և «մեռած» փոխաբերությունների հստակ սահմանազատում, քանի որ վերջինը փոխաբերությունը ներկայացնում է զուտ որպես «խոսքի զարդարանք»: Փոխաբերության հասկացությանը տեսությունը կարևորվում է հասկացության սահմանման գործընթացում (կոնցեպտուալիզացիա)՝ ընդգծելով դրա ճանաչողական գործառույթը մտածողության մեջ (Mandelblit, 1995):

Փոխաբերությունը հասկացության համակարգում հանդես է գալիս որպես հասկացությունների քարտեզման համակարգ, որում առկա աղբյուր և թիրախ տիրույթներում տեղակայված հասկացությունները փոխազդեցական կապի մեջ են իրար հետ: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ փոխաբերության բնագիր լեզվից թիրախ լեզու թարգմանությունը պահանջում է դրա հասկացության համակարգման/քարտեզման հաշվառում: Փոխաբերության Ն. Մանդելբլիտի զարգացրած հասկացության և ճանաչողական թարգմանության մոտեցումը ենթադրում է, որ թարգմանության գործընթացը խթանում է փոխաբերության հասկացության քարտեզման ակտիվացումը թարգմանչի մտածողության մեջ (Mandelblit, 1995): Այսպիսով, առաջադրվում է ևս մի գաղափար, ըստ որի՝ փոխաբերության թարգմանությունը ենթադրում է փոխադրում ոչ միայն մի լեզվից մյուսը, այլև՝ աշխարհընկալման մի ձևից մյուսը (Mandelblit, 1995):

Փոխաբերությունների կարևորումը հասկացության արտահայտման համակարգում ներկայիս բանասիրական և թարգմանական տեսություններում նոր հիմնահարցերի խթան է դարձել: Թարգմանչի առջև դրվում է ոչ թե բնագրում առկա փոխաբերական իմաստով արտահայտված բառերի և այլ լեզվական միավորների թարգմանության և թիրախ լեզվում ճշգրիտ համարժեքներ հայտնաբերելու և ներկայացնելու խնդիրը, այլև բացահայտելու այդ փոխաբերության հասկացության դրսևորումների կերտվածքը, քարտեզումը և թարգմանության միջոցով բնօրինակում ներկայացված փոխաբերական իմաստը հաղորդելու հարցը: Այս կապակցությամբ հատկանշական է Ն. Մանդելբլիտի առաջարկած խնդրի վերակառուցման մոտեցումը, որը կիրառելի է թարգմանության ընթացքում փոխաբերության կամ դրա զանազան այլ արտահայտումների հասկացության քարտեզումն ուրվագծելու գործընթացում: Մակայն, վերոնշյալ մոտեցումը սահմանափակում է թարգմանության իրականացման ընթացքում կիրառվող եղանակները, որոնք յուրաքանչյուր թարգմանչի համար անհատական են:

Հայտնի է, որ անհատն առանձնանում է իր՝ տեղեկության ընկալման, դրա դասակարգման և տարբերակման ճանաչողական մեխանիզմների գործադրման եղանակներով և ձևերով: Վերջիններս, համադրվելով իրար հետ, կազմում են անհատի ճանաչողական ոճը (դաշտային կախվածություն / անկախություն, համարժեքության աստիճան, դասակարգային ընդգրկունություն, հասկացությունների սահմանման կոնկրետություն / վերացականություն, ճանաչողական պարզություն / բարդություն և այլն), որը մեծ կարևորություն ունի անհատի հոգեկերտվածքի ձևավորման ու կազմավորման մեջ (Либих, 1998, էջ 55-80): Ընդ որում՝ ճանաչողական ոճերից յուրաքանչյուրին բնորոշ է ճանաչողական խնդրի լուծման համար առանձնահատուկ ուղղվածություն: Ճանաչողական ոճերի հետ մեկտեղ տարբերակում են նաև ճանաչողական ռազմավարությունները, որոնք հանդես են գալիս որպես տեղեկության մշակման և կիրառման եղանակների անհատականացված, ճանաչողական խնդրի լուծմանը միտված համակարգ՝ (Либих, 1998): Այսինքն, ճանաչողական խղիբների լուծման համար գործադրվում են մտածողության զանազան մեխանիզմներ, որոնք դասակարգվում են ըստ ճանաչողական ոճերի, իսկ առանձին ճանաչողական խնդրի լուծման համար գործադրվող մեխանիզմների համադրումը և կազմավորումը յուրահատուկ է և բնորոշ է անհատի հոգեբանական-ճանաչողական կերտվածքին: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ փոխաբերության թարգմանության՝ որպես ճանաչողական խնդրի պարագայում կիրառելի կլինի ոչ թե մեկ հնար, ինչպես Ն. Մանդելբրիտն է առաջարկում, այլ տարբեր ճանաչողական ոճերին բնորոշ ճանաչողական խնդիրների լուծման եղանակներ:

Ջեյ Լոնդոնի «Մարտին Իդեն» վեպից և դրա՝ Ի. Բարսամյանի իրականացրած հայերեն թարգմանությունից քաղված ստորև բերվող օրինակները պատկերավոր կերպով ներկայացնում են վերոնշյալ պնդումը.

*Next his mind leaped to the Grand Hotel at Yokohama, where, too, from the sidewalk, he had seen grand ladies. Then the city and the harbor of Yokohama, in a thousand pictures, began flashing before his eyes. But he swiftly dismissed the **kaleidoscope of memory**, oppressed by the urgent need of the present. (J. London, 1916, էջ 13)*

*Դրանից հետո երևակայությունը նրան տարավ Բոկոհամա, Գրանդ-Հոթել, ուր նույնպես հեռվից նա տեսել էր այդպիսի տիկիչներին: Բսկոյն նրա աչքի առաջ եկան Բոկոհամայի՝ քաղաքի և նավամատույցի հարյուրավոր պատկերներ: Բայց նա ստիպեց իրեն փակել **հիշողության***

գեղադիտակը և *ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել ներկայի վրա: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 19)*

Ինչպես երևում է սովյալ օրինակում «kaleidoscope» բառը ուղղակիորեն թարգմանվել է հայերեն «գեղադիտակ»: Այս պարագայում հեղինակի և թարգմանչի հասկացության համակարգում միանշանակ համապատասխանություն է առկա:

Նմանատիպ ուղղակի թարգմանություն է բերվում նաև հետևյալ հատվածում.

*He had to eat as he had never eaten before, to handle strange tools, to glance surreptitiously about and learn how to accomplish each new thing, to receive the **flood of impressions** that was pouring in upon him and being mentally annotated and classified; to be conscious of a yearning for her that perturbed him in the form of a dull, aching restlessness; to feel the prod of desire to win to the walk in life whereon she trod, and to have his mind ever and again straying off in speculation and vague plans of how to reach to her. (J. London, 1916, էջ 15)*

*Պետք է ուտել այնպես, ինչպես նա չի կերել երբեք, օգտագործել առարկաներ, որոնցով չգիտեր ինչ անել, աչքի տակով նայել ուրիշներին՝ հասկանալու համար, թե ինչպես անել այդ բոլորը, և միաժամանակ հավաքել նոր **սպալոորությունների հեղեղը**՝ հազիվ ժամանակ ունենալով դասավորել դա իր գիտակցության մեջ, դեպի աղջիկը զգալ անդիմադրելի հրապուրանք, որը լցնում էր նրա հոգին տաշտամ և հիվանդագին խռովքով. տոչորվել բուռն ցնակությանը՝ թափանցելու համար այն ոլորտները, ուր ապրում էր աղջիկը, և լարված ու անընդհատ խորհրդածել, թե ինչպես հասնել այդ նպատակին: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 22)*

Սվյալ օրինակում ակնհայտ է, որ «flood of impressions» և «սպալո-ությունների հեղեղ» բառակապակցությունները ուղիղ և ճշգրիտ համար-ժեքներ են:

Հասկանալի է, որ թարգմանիչը, որոշ դեպքերում հակված է դիմել անուղղակի, ոչ բառացի թարգմանության՝ բացատրելով աղբյուր լեզվում ներկայացված փոխաբերությունը հայերեն համարժեքներով: Այս ամենը կարելի է նկատել հետևյալ օրինակում.

*Then he had to talk, to hear what was said to him and what was said back and forth, and to answer, when it was necessary, with a **tongue prone to looseness of speech that required a constant curb.** (J. London, 1916, էջ 15)*

Բացի այդ նա պետք է խոսեր, լսեր, թե ինչ է խոսվում իր շուրջը, պատասխաներ, երբ դա հարկավոր էր, ուշադիր լսելով, որ սանձարձակ խոսքերի սովոր իր լեզուն անպատշաճ բան չասի: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 22)

Այստեղ երևում է, որ թարգմանիչը ստիպված է դիմել ընդհանուր իմաստի փոխանցմանը: «Tongue prone to looseness of speech that required a constant curb» ստորադաս նախադասությունը, որի «required a constant curb» բառակապակցությունը բառացի նշանակում է «պահանջում է մշտական սանձահարում», որոշակիորեն տրոհվել է, և «սանձահարում» բառի «սանձ» արմատն արտահայտվել է «սանձարձակ» բառում: Իսկ տվյալ տեքստի ընդհանուր իմաստը չաղավաղելու նպատակով թարգմանիչը մեկնաբանում է այն՝ ավելացնելով «անպատշաճ բան չասի» բառակապակցությունը: Այստեղ անուղղակի թարգմանությունը պատճառաբանվում է տեքստի հերմենևտիկայով:

Նմանատիպ մոտեցում է դրսևորել թարգմանիչը նաև հետևյալ օրինակում.

*And most important of all, far down and yet always at the surface of his thought, was the problem of how he should comport himself toward these persons. What should his attitude be? He **wrestled** continually and anxiously with the problem. (J. London, 1916, էջ 16)*

*Բայց ամենից շատ նրան զբաղեցնում էր մի համար միտք. ինչպես պահել իրեն այս մարդկանց մոտ: Ինչպե՞ս պահել իրեն: Տանջվելով և լարվածությամբ՝ նա **աշխատում էր վճռել** այդ առեղծվածը: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 22)*

Ինչպես երևում է, տվյալ օրինակում «wrestle» բառն անուղղակի է թարգմանված: Բառացի այն նշանակում է «ըմբշամարտել» մինչդեռ հայերեն տարբերակում ընտրված է «աշխատում էր վճռել» բարդ բայը: Այս ամենը նույնպես պայմանավորված է հեղինակի անհատական մոտեցմամբ և տեքստի ոճաբանական առանձնահատկությամբ, քանի որ հայերեն տարբերակում անհամադրելի են «ըմբշամարտել» և «առեղծված» բառերը: Ի դեպ, «առեղծված» բառը նույնպես անուղղակի է թարգմանված (այն «problem» բառի հայերեն համարժեքն է), որն էլ պայմանավորված է տեքստի հերմենևտիկ առանձնահատկությամբ:

Հետևյալ օրինակում առավել ստեղծագործ փոխաբերության ենթ հանդիպում.

*He was swiftly mastered by the concept or sensation in him **that struggled in birth-throes** to receive expression and form, and then he forgot himself and where he was, and the old*

words—the tools of speech he knew—slipped out. (J. London, 1916, էջ 18)

Իրեն փոթորկող զգացմունքներն ու մտքերը համառորեն ձգտում էին լույս աշխարհ գալ ու որոշակի ձև ընդունել, բայց, ի վերջո, նա մոռացավ, թե որտեղ է գտնվում, և հին, ծանոթ մի բառ, սովորաբար իր գործածված բառերից մեկը, դուրս պրծավ նրա լեզվից: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 24-25)

Ինչպես երևում է օրինակից, այստեղ գործ ունենք «միտք», «զգացմունք» հասկացությունների հետ, որոնք, համադրվելով «լույս աշխարհ դուրս գալ» դարձվածքի հետ, հանդես են գալիս որպես բառակապակցություն-փոխաբերություն: Վերոնշյալ դարձվածաբանական միավորը, կապակցվելով «համառորեն ձգտում էին» հարադիր բայի հետ, հոմանիշ է բնագրի «struggled in birth-throes» արտահայտությանը: Հասնելով այսպիսի լուծման՝ թարգմանիչը պահպանում է բնագրի և՛ ընդհանուր իմաստը, և՛ հեղինակի ստեղծագործական լուծումը: Այստեղ թարգմանչի մեկնողական ընթերցման շնորհիվ, հաջողվել է փոխանցել սովյալ տեքստի ընդհանուր իմաստը՝ միաժամանակ հաղորդելով այն ստեղծագործականությունը, որը բնորոշ է հեղինակի մտածելակերպին, որի ընկալումն էլ պահանջում է հասկացութային խառնուրդի մեխանիզմի կիրառություն: Այսինքն՝ հեղինակի մեկնությամբ՝ միտքը «պայքարում է ծնվել» (բառացի՝ «struggle in birth-throes»), իսկ թարգմանչի գրչով՝ այն «ձգտում է լույս աշխարհ գալ»: Երկու դարձվածքները հոմանիշներ են և գործածված են հեղինակի և թարգմանչի մայրենի լեզվին բնորոշ արտահայտմանը համապատասխան:

*He had caught a glimpse of the apparently illimitable **vistas of knowledge**. What he saw took on tangibility. His abnormal power of vision made abstractions take on concrete form. In the alchemy of his brain, trigonometry and mathematics and the whole field of knowledge which they betokened were transmuted into so much landscape. The **vistas** he saw were vistas of green foliage and forest glades, all softly luminous or shot through with flashing lights. In the distance, detail was veiled and blurred by a purple haze, but behind this purple haze, he knew, was the glamour of the unknown, the lure of romance. It was like wine to him. Here was adventure, something to do with head and hand, a world to conquer—and straightway from the back of his consciousness rushed the*

thought, conquering, to win to her, that lily-pale spirit sitting beside him. (J. London, 1916, էջ 19-20)

Նա թափանցեց իմաստության՝ առաջին ակնարկից անսահման թվացող ոլորտները: Բայց ինչ որ տեսավ, նրա համար շոշափելի ձևեր ընդունեց: Նրա երևակայության անսովոր ուժը վերացական հասկացողությունները վերածում էր կոնկրետ կերպարների: Նրա ուղեղի այլքիմիական սարքում եռանկյունաչափությունը, մաթեմատիկական ու գիտելիքների ամբողջ մի մարզը, որի խորհրդանիշն էին այդ բառերը, վերածվեցին մի պայծառ դաշտանկարի: Բնչպես նկարում՝ նա տեսնում էր կանաչ սաղարթը, անտառի բացատները՝ մերթ վառ լուսավորված, մերթ ոսկե ճառագայթներով պարուրված: Այդ բոլորը հեռվից թվում էր թեթև ծիրանագույն շղարշով պատած, բայց նա հաստատ գիտեր, որ այդ շղարշի հետևը գտնվում է անծանոթ երկիրը, ռոմանտիկ հրաշալիքների աշխարհը: Այդ բոլորը նրան արբեցնում էր, ինչպես գինին: Այստեղ հող կար սխրագործության համար, ասպարեզ՝ մտքի ու գործի համար, որը կարելի էր նվաճել: Եվ իսկույն իր գիտակցության խորքից հայտաբերեց մի միտք, նրա իր դիմացը նստած, շուշանի պես դժգույն այդ **աղջկա սիրույն նվաճել այդ ասպարեզը:** (Ջ. Լոնդոն, 2018, էջ 27-28)

Տվյալ օրինակում հասկացութային փոխաբերության տեսության գործադրումը ակներև է: Հեղինակի համար «գիտելիք» հասկացությունը, առավել կոնկրետ՝ գիտելիքի ոլորտներն իրենց բազմազանությամբ մտագուգորդվում են «դաշտ», «դաշտանկար» և «տեսարան» (բնագրում համապատասխանաբար՝ «field», «landscape» և «vista») հասկացությունների հետ, որոնք էլ տվյալ տեքստում հանդես են գալիս որպես փոխաբերություններ: Այս բոլոր փոխաբերությունները բառացի են թարգմանվել, ինչի շնորհիվ՝ ընթերցողի պատկերացումը հնարավորինս համընկնում է բնագրում ներկայացվածի հետ: Նմանապես՝ «սեր» հասկացությունը ասոցացվում է «աշխարհ»-ի հետ, որը նույնպես բառացի է թարգմանվել: Այստեղից էլ «սիրուն արժանանալու» գաղափարը փոխաբերական իմաստով ներկայացված է «աշխարհ նվաճել» (բնագրում՝ «a world to conquer») բառակապակցության միջոցով:

*He awoke next morning from **rosy scenes of dream** to a **steamy atmosphere** that smelled of soapsuds and dirty clothes, and that was vibrant with the jar and jangle of tormented life.* (J. London, 1916, էջ 39)

Հաջորդ, առավոտ զարթնելով իր վարդագույն երազներից՝ զգաց օձառի և կեղտոտ սպիտակեղենի հոտը և լսեց աշխատանքային տանջալից օրը սկսած մարդկանց կռվի ու հայհոյանքի ժխորը: (Ջ. Լոնդոն, 2018, Ջ. Լոնդոն, 2018, էջ 51)

Ինչպես երևում է օրինակից, «rosy dream» (թարգմանաբար՝ «վարդագույն երազ») ընդհանրական փոխաբերությունը բառացի է թարգմանվել հայերեն: Հարկ է նշել, որ բնագրի «steamy atmosphere» (թարգմանաբար՝ «գոլորշախառն մթնոլորտ») բառակապակցությունը հայերեն տարբերակում զեղչվել է: Բնագրում «rosy» և «steamy» փոխաբերական էպիթետները մատնանշում են «հաճելի» և «տհաճ» հասկացությունները: Հայերեն տարբերակում, կարելի է ենթադրել, որ հեղինակը, կատարելով մեկնողական վերլուծություն և զետեղելով «օձառ» և «կեղտոտ սպիտակեղեն» միավորները «վարդագույն երազներ» բառակապակցության կողքին, արդեն իսկ հաղորդում է «հաճելի երևակայական» և «տհաճ իրական» մթնոլորտների հակասականության գաղափարը:

Հեղինակը ոչ պակաս հետաքրքիր ձևով է ներկայացնում Մարտին Իդենի քրոջ կերպարը, որն իր վառ արտահայտությունն է գտնում հետևյալ հասվածի փոխաբերություններում:

It came to him, in a flash of fancy, that her nature seemed taking on the attributes of stale vegetables, smelly soapsuds, and of the greasy dimes, nickels, and quarters she took in over the counter of the store. (J. London, 1916, էջ 40)

Եվ հանկարծ նրան այնպես թվաց, թե քույրը կարծես ներծծվել է այդ փտած բանջարեղենի, կեղտոտ սպիտակեղենի և գջլած պղնձադրամների զարշելի հոտով, այն պղնձադրամների որ նա հաշվում էր վաճառասեղանի առաջ: (Ջ. Լոնդոն, 2018, էջ 52)

Ինչպես երևում է օրինակում, «flash of fancy» (թարգմանաբար՝ «երևակայության փայլատակում») բառակապակցությունը հայերեն թարգմանության մեջ վերարտադրվում է ընդամենը «հանկարծ» բառամիավորի կիրառությամբ, որով, այդուհանդերձ, հեղինակին հաջողվում է փոխանցել ասույթի ընդհանուր իմաստը: Այսօրինակ նպաստավոր թարգմանական զեղչում առկա է նաև «taking on the attributes» (թարգմանաբար՝ «ընդօրինակել հատկանիշները») բառակապակցության թարգմանված տարբերակում, որը ներկայացված է «ներծծվել» բայ-փոխաբերությամբ: Այստեղ երևում է, որ թարգմանությունը կատարելիս թարգմանիչը թե՛ առաջնորդվել է բնագրի տեքստի մեկնողական վերլուծության մոտեցմամբ, և թե՛ չի անտեսել տեքստի կառուցվածքային-ոճական յուրա-

հատկությունները: Թարգմանիչը, կիրառելով Ֆ. Շլայերմախերի «հերմենևտիկական շրջան»-ի մեթոդը (Schleiermacher, 1998; Gasparyan, 2019), նախ ընդհանուր պատկերացում է ձևավորում, ապա հասկանալով տեքստի կառուցվածքն ու բնագրի հեղինակի ոճական նախընտրությունները՝ հայերեն թարգմանության մեջ «ներծծվել» միատարր բայական փոխաբերության կիրառմամբ՝ ստեղծում է նոր, բայցև համահունչ լեզվա-ոճական հնար «take on the attributes» բառակապակցության փոխաբեն:

Վերոնշյալ օրինակների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ փոխաբերությունների հասկացությախն և ճանաչողական կառուցվածքն ըմբռնելը կենսական կարևորություն ունի գրական երկերի պատշաճ ընկալման, հասկացման և թարգմանություն իրականացնելու գործընթացում: Բնագրի փոխաբերությունների լիարժեք ընկալման համար անխուսափելի անհրաժեշտություն է պատկերացում կազմել թե, որ հասկացությոն է ընկած փոխաբերության հիմքում, իրականացնել դրա իմաստաբանական վերլուծությունն ու հասկանալ դրա կապը քննարկվող համատեքստի հետ, այսինքն՝ իրականացնել տեքստի հերմենևտիկական մեկնաբանում: Հետազոտության այս եղանակի միջոցով հնարավոր է հասկանալ և մեկնել ինչպես հեղինակի կողմից ներմուծված փոխաբերությունները, այնպես էլ դրանց թարգմանության համարժեքությունը:

Եզրակացություն

Հանդես գալով որպես մարդու ստեղծագործ մտածողության և երևակայության արտահայտման միջոց՝ փոխաբերությունն, ըստ էության, բարդ հասկացությախն համակարգ է, որի իմաստային շերտերի համակարգման մեջ ներգրավված են տրամաբանական-վերլուծական մտածական գործընթացները:

Փոխաբերությունն իր բնույթով սահմանվում է որպես բարդ երևույթների պարզ ներկայացման միջոց, ինչն իրականացվում է մոդելների ներմուծմամբ: Այս ամենի հետ մեկտեղ փոխաբերությունն արդեն իսկ ճանաչողական մոդել է և բնութագրվում է որպես հասկացությախն համակարգ ըստ իր կառուցվածքի, իսկ գործադրման մեխանիզմը իրականացվում է հասկացությախն խառնուրդի՝ իմաստային-մտածական տիրույթների փոխգործակցության ճանապարհով:

Եվ այսպես՝ փոխաբերության վերաբերյալ հոգեբանական և ճանաչողական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ոչ միայն բնութագրելու երևույթի էությունը, այլև բացատրում են դրա ստեղծման և գործադրման մեխանիզմները, ինչպես նաև դրանց՝ այլ լեզուներով թարգմանվելու հնարավորությունները:

Notes

1. Ճանաչողական մոդելավորումը հիմնվում է «խթան-հակազդում» սկզբունքի վրա: Վերջինս նեոփիհեյվիորիստական հոգեբանության զարգացման շրջանում լրամշակվում է, և «խթան-հակազդում» շղթային ավելանում է ևս մեկ միջնորդող բաղադրիչ՝ հոգեկանը. եթե վերածենք ստացված հարաբերությունը բանաձևի, կունենանք հետևյալը՝ S-P-R, որտեղ S-ը խթանն է, P-ն՝ հոգեկան գործընթացները և R-ը՝ հակազդումը: Ճանաչողական մոդելավորումը, հիմք ընդունելով վերոնշյալ բանաձևը և կիրառելով փոխառելով «սև արկղի» սկզբունքը, բացահայտում է, որ S-P-R մոդելը, ըստ էության, ներկայացնում է մուտքային և ելքային տվյալների փոխազդեցություն, որն իրականացվում է որոշ փոփոխականների ազդեցության ներքո: Ճանաչողական մոդելավորման մեջ հոգեկանի բաղադրիչը և՛ մուտքային տվյալների, այսինքն՝ խթանի, և՛ ելքային տվյալների, այն է՝ հակազդման, վրա ազդող գործոն է (Гончаров, 2012):

2. «Սև արկղ»-ը (փիլ.) հետազոտվող այն օբյեկտն է, որի ներքին կառուցվածքն անհայտ է, բայց որի գործառույթների մասին կարելի է դատել ըստ արտաքին ներգործությունների նկատմամբ նրա ռեակցիաների (Ռոզենտալ, 1975, էջ 468):

3. Բիհեյվիորիզմը (անգլ.՝ behaviour-վարք), հոգեբանական ուղղություն է, գիտակարգ վարքի մասին: 20-րդ դարի ամերիկյան հոգեբանության էությունը պայմանավորող բիհեյվիորիզմը սկզբունքորեն վերափոխել է հոգեկանի մասին պատկերացումների համակարգը: Վերջինիս կարգախոսն այն է, որ հոգեբանության առարկան վարքն է, այլ ոչ թե գիտակցությունը, այստեղից էլ ուղղության անվանումը ([https://hy. Wikipedia.org/wiki/Բիհեյվիորիզմ](https://hy.wikipedia.org/wiki/Բիհեյվիորիզմ)):

4. Բուդդիստական վանականը արևածագին բարձրանում է սարով, մայրամուտին հասնում է գագաթին և մեղիտացիա է անում այնտեղ մի քանի օր: Մի առավոտ իջնում է սարի գագաթից և մայրամուտին հասնում ստորոտին: Կարևոր չէ, թե երբ է նա սկսում կամ ավարտում իր ճամփորդությունը և ինչ արագությամբ է քայլում: Հարց՝ արդյոք կա՞ այնպիսի մի կետ ճանապարհի վրա, որը վանականը հասնում է օրվա նույն ժամին իր 2 ճամփորդությունները կատարելիս՝ սարով վեր և վար ընթանալիս: (Fauconnier, Turner, 2002; <http://markturner.org/blending.html>)

Գրականություն

- Ռոզենտալ, Մ. Մ. (1975). *Փիլիսոփայական բառարան*, Երևան, Գասպարյան, Մ., Մաթևոսյան, Ա. (2018). *Տեքստ, փոխաբերություն, մեկնաբանություն*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

- Black, M. (1954). *Metaphor*, London, The Aristotelian Society.
- Dancygier, B. (2014). Stylistics and Blending. *The Routledge Handbook of Stylistics*. London and New York, Routledge Taylor & Francis Group.
- Fauconnier, G., Turner, M. (2002). *The Way We Think. Conceptual Blending and the Mind's Hidden Complexities*. Basic Books.
- Fauconnier, G., Turner, M. (2008). Rethinking Metaphor. *Cambridge Handbook of Metaphor and Thought*. New York, Cambridge University Press.
- Gasparyan, S. (2019). A Methodological Mechanism for Applying the Hermeneutical Approach. *Armenian Folia Anglistika*, vol. 15, N 1 (19), Yerevan, YSU Press.
- Guldin, R. (2016). *Translartion as Metaphor*. London, New York, Routledge, Taylor and Francis Group.
- Hermans, Th. (2007). *The Conference of the Tongues*. Manchester: St. Jerome.
- Lakoff, G., Johnson, M. (1980). The Metaphorical Structure of the Human Conceptual System. *Cognitive Science*, 4, 195-208.
- Lakoff, G., Núñez, R. E., (2000). *Where Mathematics Comes From, How the Embodied Mind Brings Mathematics into Being*. Basic Books.
- Lakoff, G., Johnson, M. (1980). *Metaphors We Live By*. Chicago University Press.
- Mandelblit, N. (1995). The cognitive view of metaphor and its implications for translation theory. *Translation and Meaning*, Part 3, 483–495. Maastricht, the Netherlands, Maastricht University Press.
- Ricœur, P. (2003). *Sur la traduction*, Paris, Bayard.
- Schleiermacher, F. (1998). *Hermeneutics and Criticism and Other Writings*. Cambridge: Cambridge University Press.
- Аристотель (1983). *Поэтика*. Москва, изд. «МЫСЛЬ».
- Брагина, Н. Н., Доброхотова, Т. А. (1988). *Функциональные асимметрии человека*. Москва, Медицина.
- Гончаров О. А. (2012). *Истоки и тенденции когнитивной психологии*. ФГБОУ ВПО “Сыктывкарский государственный университет”.
- Лагута, О. Н. (2009). *Метафорология: теоретические аспекты. Часть 1*. Новосиб. гос. ун-т. Новосибирск.
- Лагута, О. Н. (2009). *Метафорология: теоретические аспекты. Часть 2*. Новосиб. гос. ун-т. Новосибирск.
- Либин, А, (1998). *Стиль человека: психологический анализ*. Москва, ППП «Типография наука».
- Солсо, Р. Л. (1996). *Когнитивная психология*. Москва, Тривола.

Լեզվական նյութ

- London, J. (1916). *Martin Eden*. London, UK, Macmillan & Co. Ltd.
- Լոնդոն, Ջ. (2018). *Մարտին Էդեն* [թարգմ. Ի. Բարսամյան], Երևան, Անտարես:

Համացանցային հղումներ

<http://markturner.org/blending.html> Retrieved July 8, 2024

<https://plato.stanford.edu/entries/metaphor/> Retrieved July 6, 2024

https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%B8%D0%B0%D0%B6%D0%B5_%D0%96%D0%B0%D0%BD Retrieved July 10, 2024

https://ru.wikipedia.org/wiki/%D0%92%D1%8B%D0%B3%D0%BE%D1%82%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9_%D0%9B%D0%B5%D0%B2_%D0%A1%D0%B5%D0%BC%D1%91%D0%BD%D0%BE%D0%B2%D0%B8%D1%87 Retrieved June 3, 2024

<https://hy.wikipedia.org/wiki/Բիհեյվիոնրիզմ> Retrieved July 9, 2024, 06:29

N. Sargsyan – *The Cognitive Essence of Metaphor.* – Metaphors by their complex semantic structure never cease to attract the attention of linguists, philologists and literary scholars and are often found as central objects of examination in different studies . In the course of the development of science, metaphors having not only linguistic nature but also being phenomena expressing peculiarities of mental processes, have been studied in the fields of psychology, cognitive science, cognitive linguistics. The fact that metaphors are omnipresent serves as a reason for their study not only for the purpose of examining imaginative language and speech elements typical of the works of fiction but also for the exploration and description of human psychological portrait and understanding. In the present article an attempt is made to clarify and examine the essence of metaphors as well as the psychological and cognitive motives for their creation. From a psychological perspective, the object of examination consists in the explanation of the nature of metaphor emergence in human brain. The cognitive peculiarities of their mechanism of operation are presented in the article as well. With the objective of accomplishing a comprehensive and profound examination of metaphors, the consideration of the achievements in the fields of psychology and cognitive science, i.e. adherence to interdisciplinary approach, which implies application of the well-defined principles of both linguistics and other sciences, is essentially important and topical.

Keywords: *metaphor, cognitive studies, psychology, cognitive model, modeling, categorization, understanding, concept*

Н. Саргсян – *Когнитивная сущность метафоры.* – По своей сложной смысловой структуре метафоры всегда привлекали внимание многих лингвистов, филологов и литературоведов и нередко становились центральной задачей исследования. С развитием науки область их исследований посте-

пенно расширялась; метафоры стали изучаться также в таких научных направлениях как психология, когнитивистика, когнитивная лингвистика и др. Факт вездесущности метафор в обыденной реальности стал причиной того, что их изучение осуществлялось не только с целью анализа элементов образной речи и языка, типичного для произведений художественной литературы, но и для раскрытия и описания психологического портрета человека и его понимания. В данной статье совершена попытка выяснить и исследовать сущность метафор, а также психологические и когнитивные аспекты обусловленности их создания. С точки зрения психологии объектом данного исследования является характер создания и понимания метафор. В работе также представлены когнитивные особенности механизма их реализации. Учет достижений в сфере лингвистики и когнитивной науки или, другими словами, ориентация на междисциплинарный подход, что предполагает применение заранее выработанных принципов из областей как лингвистики так и других наук, чрезвычайно актуальна для осуществления всестороннего и полноценного исследования метафор.

***Ключевые слова:** метафора, когнитивистика, психология, когнитивная модель, моделирование, категоризация, понимание, концепт*